կեղեցւոյն (9)։

«Այս արդէն մի ապացոյց է, կ'ըսէ Լէո, որ իրենց ազատութեան մասին մտածող հայերը, ինչպէս այս տեսանք եւ Ստեփանոս ու Միքայէլ Կաթողիկոսների ժամանակ, վճռել էին միանալ Կաթոլիկ եկեղեցուն։ Սկսուում է մի շարժում, որի գլուխն է Ցակոբ Կաթողիկոսը։ Ռէթսունամեայ ծերունին, որին հայերը, նրա նախորդի նման, համարում էին հրաշագործ, գործել սկսում է երիտասարդական ոգեւորութեամբ։ Նա չէր կարող, ի հարկէ, անշարժ ու անտարբեր մնալ այնպիսի մի ժամանակ, երբ կաթոլիկ կրօնը պատրաստուում էր ոտնել իր ամենամեծ յաղթանակը։ Ցամառել իր ազգային առանձնութեան մէջ այլեւս չուզեց ամենայն հայոց կաթողիկոսը։ Եւ այս որամադրութիւնը միայն նրան չէր յատուկ, այլեւ կրօնական եւ աշխարհական շատ շրջանների։ Նախիջեւանի հայ կաթոլիկ եպիսկոպոս Մատթէոսը տարիներով (1668–1674) Սպահանում կատարում էր Լուի ԺԴ-ի, Պապի եւ Վենետիկի Հանրապետութեան ներկայացուցչի պաշտօնը։ Հայ կաթոլիկ երիտասարդները տարուում էին Պարիզ ուրիշ ազգերի (մարոնի, յոյն) երիտասարդների հետ, կրթուում էին այնտեղ եւ խոկոյն հայրենիք վերադարձուում, որպէսզի այնտեղ տարածեն սէր դէպի Ֆրանսիան։ Այս բոլոր երեւոյթները նոր որամադրութիւններ էին ըս-

(9) Լեո, Անդ 344։